

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 19-ին, կիրակի.—Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ամեն տարի Զատկի տոնը նշվում է ծաղկազարդ գարնանը: Կարծես բնությունն էլ իր հերթին արձագանքում է Քրիստոսի հրաշափառ Հարությանը և մարդկանց հոգիները լցնում զարթոնքի հավերժածուփ լույսով: Զատկի տոնը քրիստոնեական աշխարհի մեծագույն տոնն է:

Վաղ առավոտից Մայր տաճարը լեփ-լեցուն է հավատացյալ բազմությամբ. Զատկի տոնի առթիվ բազմաթիվ ուխտավորներ են եկել Էջմիածին քաղաքից, Երևանից և Հայաստանի տարբեր շրջաններից ու գյուղերից:

Ժամը 11-ն է: Հնչում են Մայր տաճարի ավետաբեր զանգերը՝ ի լուր ամենքի ազդարարելով Քրիստոսի հրաշափառ Հարությունը:

Վեհափառ Հայրապետը զգեստավորված, եկեղեցական թափորով, եկեղեցու զանգերի տոնական ու քաղցրահունչ ղողանջների և հոծ հավատացյալների ջերմեռանդ արտահայտությունների ներքո Վեհարանից առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու օրվա հանդիսավոր սուրբ պատարագը:

Մայր տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել հյուրաբար Մայր Աթոռում գտնվող արտասահմանից ժամանած հայ ուխտավորներ:

Զատկական ս. պատարագին ներկա են նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ս. Վարդանյանը և տեղակալ տիար Ռ. Զարգարյանը:

Ս. պատարագի հոգեպարար արարողությունն սկսվում է և հանդիսավորությամբ շարունակվում մինչև «Հայր մեր»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, հաղորդելով Քրիստոսի հրաշափառ Հարության ավետիսը, շնորհավորում է համայն հայության Զատիկը, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, ու խոսում իր ոգեշունչ քարոզը՝ նվիրված օրվա տոնին և նրա խորհրդին: Վեհափառ Հայրապետի քարոզը նույն օրը, երեկոյան ժամը 23.30-ին, ձայնասփռվեց Երևանի ռադիոկայանից (Քարոզը տես էջ 3):

Հավարտ ս. պատարագի բազում հավատացյալներ Վեհափառ Հայրապետի ձեռքից ստանում են ս. Հաղորդություն:

Սուրբ Հաղորդության շնորհաբաշխումից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան՝ իր ճանապարհին օրհնելով հավատացյալ բազմությանը:

Վեհարանում Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս օրհնում է ներկաներին Ս. Զատկի տոնի առթիվ: Ապա բոլոր ներկաները շնորհավորում են Վեհափառ Հայրապետին՝ Ս. Զատկի տոնի առթիվ, և աջահամբույրով իրենց խոնարհությունը հայտնում նրան:

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատանը տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի պաշտոնական անձինք և հյուրեր Անգլիայից, Ֆրանսիայից ու Ամերիկայի Միացյալ Նահանգներից:

Պաշտոնական ճաշկերույթին ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ս. Վարդանյանը և տեղակալ տիար Ռ. Զարգարյանը:

Ճաշկերույթի ընթացքում բոլոր ներկաները հոտնկայս բաժակ են բարձրացնում Հայոց Հայրապետի կենաց արևշատության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պայծառության ու անսասանության համար:

Զատկական ս. սեղանն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և աղոթքով:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց». «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»: